Ի պատասխան Ձեր 15.06.11թ. N 15/15.1/10000-11 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009թ. դեկտեմբերի 25-ի N Մ-895-Ա («Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպություն) որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի («Արաքս թոչնաֆարիկա» ՓԲԸ-ի, «Երևանի թոչնաբուժական ֆաբրիկա» ԲԲԸ-ի և «Արզնու տոհմային ԹՏԻ» ԲԲԸ-ի հետ կնքված գործարքներ) հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

/Հարգանքով

Ատոմ Զանցուղայան

034/18885-11



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 9/14.2

0015, Երևան, Մ.Խորենացու 3,  
Հեռ. 50 20 20, 59 46 05

ԱԿ/3-4/4222-11

21.06.11

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի  
համակարգման հանձնաժողովի նախագահ  
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 15.06.2011թ. թիվ 15/15.1/10000-11 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի դեկտեմբերի 25-ի ՄՄ-895-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպություն)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

034/18848-11

ԼԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

\_\_\_ հուլիսի 2011 թվականի N Մ-  
քաղ. երևան

-Ա

9/14.3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ  
ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-057-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ  
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-  
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-  
թյան 2011 թվականի հունիսի -ի N 3/3.8-1/-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն  
առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հունիսի -ի N ԱԱ/3-4/-11  
եզրակացությունները, **ո թ ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմա-  
կերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 02528755) կնքված՝ ստորև նշված  
պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի  
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնա-  
ժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգոր-  
ծական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Կապեր  
եկեղեցու և կառավարության հետ» ծրագրի մասին» N Մ-057-Ա որոշմամբ հաստատված  
ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն.

«Տիգրան Մեծ» հրատարակչություն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02505322) 2011 թվականի  
մայիսի 27-ին կնքված՝ N WVA/CC/TB-11/002 պայմանագրում նշված գործարքը, որով  
նախատեսվում է տպագրական աշխատանքների իրականացում՝ 3060000 դրամի չափով,  
առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-  
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական  
եկամուտների կոմիտե:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

9/14.3

0010, Երևան, Մեյիք-Աղամյան փող. 1  
Հեռ. (+374 10) 59 52 26

21.06.2011թ. № 3.8-1/80532-11

Ձեր № \_\_\_\_\_

Հայաստանի Հանրապետության  
կառավարության բարեգործական ծրագրերի  
համակարգման հանձնաժողովի նախագահ՝  
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 16.06.11թ. N 15/15.6/10064-11 գրության՝ կապված ՀՀ  
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011թ.  
փետրվարի 18-ի N Մ-057-Ա («Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական  
կազմակերպություն) որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին  
որոշման նախագծի («Տիգրան Մեծ» հրատարակչություն» ՓԲԸ-ի հետ կնքված  
գործարք) հետ, հայտնում եմ, որ մեր իրավասությունների շրջանակներում  
դիտողություններ և առաջարկություններ չունենք:

/ Հարգանքով

Ատոմ Զանցուղազյան

034/18862-11  
21.06.2011թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 9/14.3

0015, Երևան, Մ.Խորենացու 3,  
Հեռ. 50 20 20, 59 46 05


№ ՈՈԱ/3-4/4300-11  
22.06.2011թ.

«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 16.06.2011թ. թիվ 15/15.6/10064-11 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի ՈՍ-057-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ.

Հիմք ընդունելով կից ներկայացված «Տիգրան Մեծ» հրատարակչություն» ՓԲԸ-ի հետ կնքված պայամանագրի 2.1 կետը՝ առաջարկում եմ որոշման նախագծի 1-ին կետում գործարքի արժեքը նշել 3.060.000 դրամ (առանց ԱԱՀ-ի):

 Ա. Աղաձերյան

044/19096-11  
22.06.2011թ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի ՈՍ-057-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն)» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը	Հիմնավորում
«Հիմք ընդունելով կից ներկայացված «Տիգրան Մեծ» հրատարակչություն» ՓԲԸ-ի հետ կնքված պայամանագրի 2.1 կետը՝ առաջարկում եմ որոշման նախագծի 1-ին կետում գործարքի արժեքը նշել 3.060.000 դրամ (առանց ԱԱՀ-ի):	«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի ՈՍ-057-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն)» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ
«Հիմք ընդունելով կից ներկայացված «Տիգրան Մեծ» հրատարակչություն» ՓԲԸ-ի հետ կնքված պայամանագրի 2.1 կետը՝ առաջարկում եմ որոշման նախագծի 1-ին կետում գործարքի արժեքը նշել 3.060.000 դրամ (առանց ԱԱՀ-ի):	Հաշվի է առնվել նախագիծը լրամշակվել է:

9/14.3

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

9/14.4

----- 2011 թվականի N Մ- -Ա  
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի N Մ-642-Ա ԵՎ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-282-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում տուրքեր կույտոյի դեմ պայքարի ազգային ծրագիր», «Առողջապահական համակարգի հզորացում»)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի հունիսի 13-ի N ԱՔ/5251-11 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հունիսի 20-ի N 3/3.8-1/80496-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հունիսի 21-ի N ԱԱ/3-4/4223-11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուրքերկույտոյի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի սեպտեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետությունում տուրքերկույտոյի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում» դրամաշնորհային ծրագրի մասին (երկրորդ փուլ)» N Մ-642-Ա և 2010 թվականի ապրիլի 30-ի «Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-282-Ա որոշումներով հաստատված ծրագրերի իրականացման հետ և դրանց համար ունի զգալի նշանակություն՝

«Հանրապետություն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02556276) 2011 թվականի հունիսի 02-ին կնքված N ARM-809-G04-HSS-00/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հայտարարությունների հրապարակման ծառայությունների մատուցում՝ 825000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի (600000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի N Մ-642-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներին, 225000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի N Մ-282-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներին):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
Ն Ա Ն Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Կ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

9/14.4

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1  
Հեռ. (+374 10) 59 52 26

20.06.11 № 3.8-1/80496-11

Ձեր № \_\_\_\_\_

Հայաստանի Հանրապետության  
կառավարության բարեգործական ծրագրերի  
համակարգման հանձնաժողովի նախագահ՝  
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 15.06.11թ. N 15/15.4/10009-11 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009թ. սեպտեմբերի 11-ի N Մ-642-Ա և 2010թ. ապրիլի 30-ի N Մ-282-Ա որոշումներով (<<<< տուրքերկույտոյի դեմ պայքարի ազգային ծրագիր>>, դրամաշնորհային ծրագիր) հաստատված ծրագրերին հարակից գործարքի մասին որոշման նախագծի (<<Հանրապետություն>> ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագիր) հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

/ Հարգանքով

Ատոմ Զանջուղազյան

NO 34/18823-11  
20.06.11թ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵՎԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 9/14.4

0015, Երևան, Մ.Խորենացու 3,  
Հեռ. 50 20 20, 59 46 05

*N 262/3-4/4223 -11  
21.06.11թ*

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի  
համակարգման հանձնաժողովի նախագահ  
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 15.06.2011թ. թիվ 15/15.4/10009-11 գրությանը կից ներկայացված  
«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի  
համակարգման հանձնաժողովի 2009 թվականի սեպտեմբերի 11-ի ՈՒ-642-Ա և 2010  
թվականի ապրիլի 30-ի ՈՒ-282-Ա որոշումներով հաստատված ծրագրերին  
հարակից գործարքի մասին («Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի  
դեմ պայքարի ազգային ծրագիր», «Առողջապահական համակարգի հզորացում»)»  
որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Աղայան

Անողակի հարկերի բաժին, հեռ.594652

*N 044/18846-11  
21.06.11թ*

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
2011 թվականի ՈՒ- -Ա  
քաղ. երևան

9/14.5

ՀԱՅԱՅՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 3-Ի  
ՈՒ-411-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ  
ՄԱՍԻՆ («Խոսքովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-  
կարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահ-  
պանության նախարարության 2011 թվականի հունիսի 14-ի ՈՒ/01.3/11099-11 գրությունը և  
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հունիսի  
16-ի ՈՒ 3/3.8-1/80320-11, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պե-  
տական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հունիսի 21-ի ՈՒ/3-4/4231-11 եզրակացու-  
թյունները, որոշում է.

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարու-  
թյան, Կովկասի բնության հիմնադրամի և «Խոսքովի անտառ» պետական արգելոց»  
ՊՈԱԿ-ի միջև 12.02.2010 թվականին կնքված դրամաշնորհային ծրագրի միջոցներով իրա-  
կանացվող գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության  
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվա-  
կանի հունիսի 3-ի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարար-  
ության, Կովկասի բնության հիմնադրամի և «Խոսքովի անտառ» պետական արգելոց»  
ՊՈԱԿ-ի միջև 12.02.2010 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում  
ֆինանսավորվող 2011 թվականի» ծրագրի մասին» ՈՒ-411-Ա որոշմամբ հաստատված  
ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՁԻ ԷՅ ԷԼ ՎՈՒԴ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00087947) 2011 թվականի ապրիլի 29-ին,  
մայիսի 10-ին և 20-ին կնքված՝ ապրանքների մատակարարման գնման ՈՒ ԽԱՊԱ-ԱՊՁԲ-  
11/06, ԽԱՊԱ-ԱՊՁԲ-11/07 և ԽԱՊԱ-ԱՊՁԲ-11/08 պայմանագրերում նշված գործարքներն,  
որոնցով նախատեսվում է սույն պայմանագրերի ՈՒ 1 հավելվածներով նախատեսված ապ-  
րանքների գնում՝ 950000, 811000 և 784000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի  
հարկի.

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար-  
ության, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն և Հայաս-  
տանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
Ն Ա Տ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Կ ՈՐ Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

9/14.5

0010, Երևան, Մեխք-Աղամյան փող. 1  
Հեռ. (+374 10) 59 52 26

16.06.11թ. № 9/3.8-1/80320-11

Ձեր № \_\_\_\_\_

Հայաստանի Հանրապետության  
կառավարության բարեգործական ծրագրերի  
համակարգման հանձնաժողովի նախագահ՝  
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 14.06.11թ. N 15/15.4/9935-11 գրության՝ կապված ՀՀ  
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011թ.  
հունիսի 3-ի N Մ-411-Ա («Խոսքի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ) որոշմամբ  
հաստատված ծրագրին հարակից գործարքի («ՋԻ ԷՅ ԷԼ ՎՈՒԴ») ՍՊԸ-ի հետ կնքված  
պայմանագիր) հետ, հայտնում եմք, որ մեր իրավասությունների շրջանակներում  
դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Զանջուղազյան

N 034/18315  
16.06.11թ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Տ Ա Գ Ա Հ Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ 9/14.5

0015, Երևան, Մ. Խորենացու 3,  
Հեռ. 50 20 20, 59 46 05

N 034/3-4/231-11  
21.06.11թ

«Կառավարության բարեգործական ծրագրերի  
համակարգման հանձնաժողովի նախագահ  
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 14.06.2011թ. թիվ 15/15.4/9935-11 գրությանը կից ներկայացված  
«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի  
համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 3-ի N Մ-411-Ա որոշմամբ  
հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Խոսքի անտառ»  
պետական արգելոց» ՊՈԱԿ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ  
չկան:

Ա. Աղաջանյան

N 044/18873-11  
21.06.11թ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
2011 թվականի N Մ-  
քաղ. Երևան -Ա 9/14.6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ  
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-935-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ  
ՀԱՐԱՎԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ՍԻ. Օ. ԷՅ. ԷՖ. ՄԱՆՈՒԿՆԵՐԻ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի -ի N 3/3.8-1/-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի -ի N ԱԱ/3-4/-11 գրությունները, **ո թ ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Սի. Օ. ԷՅ. ԷՖ.» մանուկների բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Սի. Օ. ԷՅ. ԷՖ.» մանուկների բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-935-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՏՈՍՊ» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01803966) 2011 թվականի հունիսի 10-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շապիկների և տոպրակների ձեռքբերում՝ 1327500 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2) «ՏՈՍՊ» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01803966) 2011 թվականի հունիսի 10-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շապիկների ձեռքբերում՝ 521000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

9/14.6

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1  
Հեռ. (+374 10) 59 52 26

23.06.11 № 3.8-1/80860-1/

Ձեր № \_\_\_\_\_

Հայաստանի Հանրապետության  
կառավարության բարեգործական ծրագրերի  
համակարգման հանձնաժողովի նախագահ՝  
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 22.06.11թ. N 15/15.1/10373-11 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010թ. դեկտեմբերի 24-ի N Մ-935-Ա («Սի. Օ. ԷՅ. ԷՖ.» մանուկների բարեգործական հիմնադրամ») որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի («ՏՈՍՊ» ԲԲԸ-ի հետ կնքված գործարք) հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

/ Հարգանքով

Ատոմ Զանցողազյան


094/19273-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
2011 թվականի N Մ-  
քաղ. Երևան

-Ա

9/14.7



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌՆԵԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 9/14.6

0015, Երևան, Մ.Խորենացու 3,  
Հեռ. 50 20 20, 59 46 05

ԱԿ/3-4/4443-11  
24.06.11

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի  
համակարգման հանձնաժողովի նախագահ  
պարոն Ա. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 22.06.2011թ. թիվ 15/15.1/10373-11 գրությանը կից ներկայացված  
«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի  
համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի ՈՍ-935-Ա  
որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Սի. Օ. Էյ. Էֆ.»  
մանուկների բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ  
առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

ԱԿ/19654-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈՒՆԻՍԻ 3-Ի N Մ-432-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ  
ԼՐԱՏՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐԹԻ  
ՄԱՍԻՆ («ԳԱՖԷՍՏԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի  
համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության  
ֆինանսների նախարարության 2011 թվականի -ի N 3/3.8-1/ -11 և Հայաստանի  
Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011  
թվականի -ի N ԱԱ/3-4/ -11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի  
համակարգման ժողովի 2011 թվականի հունիսի 3-ի «ԳաֆէսՏեան թանգարան»  
հիմնադրամի կողմից իրականացվող «Երեխաների պաշտպանության միջազգային օր»  
ծրագրի մասին» N Մ-432-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 10-րդ կետի 1-ին ենթակետում  
ձեռքբերվող ապրանքների ցանկում ավելացնել «շապիկներ» բառը:

2. Սահմանել, որ «ԳաֆէսՏեան թանգարան» հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև  
նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն  
որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա  
համար ունի զգալի նշանակություն՝

«Մինե» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 02549564) հետ 2011 թվականի մայիսի 29-ին կնքված՝  
N 05/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տարբերանշանով  
տպագրված ապրանքի ձեռքբերում՝ 229600 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի  
հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների  
նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր  
պետական եկամուտների կոմիտե:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
Ն Ա Ն Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Կ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

9/14.7

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1  
Հեռ. (+374 10) 59 52 26

21.06.11 № 3.8-1/80533-11

Ձեր № \_\_\_\_\_

Հայաստանի Հանրապետության  
կառավարության բարեգործական ծրագրերի  
համակարգման հանձնաժողովի նախագահ՝  
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 17.06.11թ. N 15/15.1/10119-11 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011թ. հունիսի 3-ի N Մ-432-Ա («Գաֆէսճեան թանգարան») հիմնադրամ) որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին որոշման նախագծի («Մինե» ՍՊԸ-ի հետ կնքված գործարք) հետ, հայտնում եմք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

/ Հարգանքով

Ատոմ Զանգուղայան

034/18891-11



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՈՐԵՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Ն Ա Գ Ա Կ Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ 9/14.7

0015, Երևան, Մ. Խորենացու 3,  
Հեռ. 50 20 20, 59 46 05

64/3-4/4353-11  
23.06.11

«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին»

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 17.06.2011թ. թիվ 15/15.1/10119-11 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 3-ի NՄ-432-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Գաֆէսճեան թանգարան» հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ.

Քանի որ վերոնշյալ ծրագրի 10-րդ կետում նշված ապրանքների ու ծառայությունների ցանկում տպագրված շապիկների ձեռք բերում նախատեսված չէ, ուստի անհրաժեշտ եմ համարում ներկայացնել համապատասխան պարզաբանումներ՝ կից ներկայացված «Մինե» ՍՊԸ-ի հետ կնքված գործարքը որպես ծրագրին հարակից գործարք որակելու համար:

Ա. Ավակյան

044/19293-11



«Գաֆէսեան բանգարան» Հ/Դ.  
 Ելի՛ց թիվը 038  
 29 06 2011 թ.

9/14.7

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի  
 համակարգման հանձնաժողովի նախագահ՝  
 պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
 ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
 3 հունիսի 2011 թվականի N Մ - 432 - Ա  
 քաղ. Երևան

24.06.2011թ.

«ԳԱՖԷՍԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՅՎՈՂ  
 «ԵՐԵՒԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ» ԾՐԱԳՐԻ  
 ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի մայիսի 30-ի N 3/3.8-1/79510-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի մայիսի 26-ի N 3139-11, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի մայիսի 27-ի N 03/07-1/5550-11, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության 2011 թվականի հունիսի 1-ի N 01/3.1/2344-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի մայիսի 27-ի N ԱԱ/3-4/3438-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,  
 Ի պատասխան ՀՀ կառավարությանն առընթեր Պետական Եկամուտների Կոմիտեի 2011թ. հունիսի 23-ի N ԱԱ/3-4/4353-11 գրության խնդրում ենք Ձեր 3 հունիսի 2011թ. N Մ-432-Ա որոշմամբ հաստատված «Երեխաների պաշտպանության միջազգային օր» ծրագրի 10-րդ կետի 1-ին ենթակետով ձեռք բերվող նյութերին ավելացնել «շապիկներ» քառը:

Հարգանքով՝

գործադիր տնօրենի ժ/պ  
 Վահագն Մարաքյան

13024

«ՀԱՄԱԿԱՐՈՒԹՅԱՆ  
 ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
 ԾՐԱԳՐԵՐԻ  
 ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ  
 ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ»  
 Մ. Պ. Յ. Բիվ 094/179471  
 29 06 2011 թ.


1. Բարեգործական որակել «Գաֆէսեան թանգարան» հիմնադրամի կողմից իրականացվող 6510000 դրամ ընդհանուր արժողությամբ «Երեխաների պաշտպանության միջազգային օր» ծրագիրը (կցվում է):

2. «Գաֆէսեան թանգարան» հիմնադրամին՝  
 1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված


ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

2016



ՀԱՍՏԱՍՎԱԾ Է

գործադիր տնօրենի ժամանակավոր պատվիրակության Կահագն Մարաթյանի կողմից «24» մայիս 2011թ.

« Ե Ր Ե Խ ա ն ե ռ ի պ ա շ տ պ ա ն ու թ յ ա ն մ ի ջ ա զ զ ա յ ի ն օ Ր »  
Ծ Ր Ա Պ Ի

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանում երեխաների հարստացմանը արվեստի հետ բազմալիսի անվտար արվեստի խմբակների կազմակերպման միջոցով, ինչը ներառում է խնցբործություն, նկարչություն, բատիկ, տիլիմիների պարաստում, ինչպես նաև բազմաժանր համերգային ծրագիր, կրկեսային ներկայացումներ:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտավոր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Փաֆլեմեան ֆանդարան» հիմնադրամ հասցե՝ ք. Երևան, Կասկադ համալիր ՀՎՀՀ՝ 02562304
4.	Ծրագիրը կատարողը	«Փաֆլեմեան ֆանդարան» հիմնադրամ հասցե՝ ք. Երևան, Կասկադ համալիր ՀՎՀՀ՝ 02562304
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագիրը իրականացվում է ՀՀ Երևան քաղաքի Կասկադ համալիր տարածքում մշակույթի և արվեստի բնագավառ:
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ֆինանսավորումը կատարվում է «Փաֆլեմեան ֆանդարան» հիմնադրամի միջոցներով:
7.	Բարեգործություն ստացողը	Ընդհանուր բյուջեն կազմում է 6,510,000 ՀՀ դրամ:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագրի շահառուներն են՝ Երեխաները, որոնք ուղղակիորեն կօգտվեն ծրագրից: Ծրագիրը բաց կլինի մաս բոլոր զանգվածայինների համար Սկիզբ՝ 2011թ. մայիսի 2-րդ, վերջնաժամանակետ՝ 2011թ. հուլիսի 31-րդ:

24. 7/24

<p>9. <i>Արջացատումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը</i></p>	<p>1. ստեղծագործական մաս (արվեստի խմբավմներ)՝ 400,000 ՀՀ դրամ,                  2. համերգային ծրագրի կազմակերպում՝ 2,300,000 ՀՀ դրամ,                  3. բեմի տեղադրում, լուսային և ձայնային մասնագետի ներգրավում՝ 2,740,000 ՀՀ դրամ,                  4. կրկեսային ներկայացումներ, հեքիաթային հերոսներ՝ 370,000 ՀՀ դրամ,                  5. փուլիկների ձևավորում՝ 200,000 ՀՀ դրամ,                  6. նրավատարություն՝ 500,000 ՀՀ դրամ:</p>
<p>10. <i>Չեզոք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագրող, ծավալները և նախատեսվող գինը</i></p>	<p>հետևյալ հետևյալ                  1. ստեղծագործական մաս (գրեմական պիսուլյներ՝ գունավոր բոթեր, ինքնակազմ բոթեր, պատկերներ, մկրատ և այլն, ինչպես նաև ստեղծագործական նյութեր՝ կավ, մետաքս և այլն)՝ 2,700,000 ՀՀ դրամ,                  2. բեմի տեղադրում, լուսային և ձայնային լուսամագետի ներգրավում, փուլիկների ձևավորում՝ 2,940,000 ՀՀ դրամ,                  3. կրկեսային ներկայացումների ցուցադրություն, հեքիաթային հերոսների ներկայացում՝ 370,000 ՀՀ դրամ,                  4. նրավատարություն՝ 500,000 ՀՀ դրամ:</p>
<p>11. <i>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր</i></p>	<p>Ծրագրի շրջանակներում կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:</p>
<p>12. <i>Հանագործությունները պետական կարգավորման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ</i></p>	<p>«Գաֆնժանան բանգարան» հիմնարկումն համագործակցելու է բոլոր ցամաքացող անձանց հետ՝ այն կազմակերպությունների և անհատների հետ, ովքեր կցանկանան օժանդակել այս ծրագրի իրագործմանը:</p>
<p>13. <i>Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների հիմնդրադրությունը</i></p>	<p>Ծրագիրը կնշակի իր գործունեության արդյունավետության գնահատման ներքին հսկողության համակարգ և պարբերաբար առաջիկայի կենտրոնի անվախ առաջնորդի կողմից: Սահմանված կարգով ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով է ներկայացվում տեղեկատվություն ծրագրի իրականացման վերաբերյալ:</p>

21.7/2 ✓

Տ Ե Ղ Ե Կ Կ Լ Ն Ք

«ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 3-ի N Ա-432-Ա որոշմամբ հաստատված ծրագրում լրացում կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքի մասին («Գաֆնժանան բանգարան» հիմնարկում)» որոշման նախագծի վերաբերյալ

<p>Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը</p>	<p>Հիմնավորում</p>
<p>ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե – 23.06.11, N ԱԱ/3-4/4353-11</p>	
<p>1. Ծրագրի 10-րդ կետում ձեռքբերվող ապրանքների ցանկում նախատեսված չեն շտափվներ</p>	<p>1. Ծրագրում կատարված է համապատասխան լրացում</p>

9/14.7

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

— հուլիսի 2011 թվականի N Մ-  
քաղ. երևան

-ւ 9/14.8

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-  
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱ-  
ԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-954-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ  
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ  
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-  
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-  
թյան 2011 թվականի հունիսի -ի N 3/3.8-1/-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն  
առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հունիսի -ի N ԱԱ/3-4/-11  
եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672)  
կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն  
կասկած են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի  
համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 21-ի «Սիմոնյան» կրթական  
հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասար-  
դական կենտրոն» ծրագրի մասին» N Մ-954-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրակա-  
նացման հետև և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

- 1) «Սոլիդ մակերես» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00865263) 2011 թվականի մայիսի 2-ին  
կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է երկու համակարգչային  
աշխատասեղանի պատրաստում՝ 3219000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի  
հարկի.
- 2) «Սոլիդ մակերես» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00865263) 2011 թվականի մայիսի 31-ին  
կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մեկ համակարգչային  
աշխատասեղանի պատրաստում՝ 797000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի  
հարկի.
- 3) «SmartDrow Software» ՍՊԸ-ի հետ (9909 Mira Mesa Blvd., Suite 300, San Diego, CA  
92131) 2011 թվականի մարտի 12-ի N 17904 փոխանցման հաշվով իրականացվող  
գործարքը, որով նախատեսվում է համակարգչային ծրագրի լիցենզիայի ձեռքբերում՝ 723  
ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-  
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական  
եկամուտների կոմիտե:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ ՈՐ Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

9/14.8

0010, Երևան, Մեխիզ-Աղամյան փող. 1  
Հեռ. (+374 10) 59 52 26

23.06.2011թ. № 3.8-1/80679-11

Ձեր № \_\_\_\_\_

Հայաստանի Հանրապետության  
կառավարության բարեգործական ծրագրերի  
համակարգման հանձնաժողովի նախագահ՝  
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 21.06.11թ. N 15/15.6/10331-11 գրության՝ կապված ՀՀ  
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010թ.  
դեկտեմբերի 24-ի N Մ-954-Ա («Սիմոնյան» կրթական հիմնադրամ) որոշմամբ  
հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին որոշման նախագծի («Սոլիդ  
մակերես» ՍՊԸ-ի և «SmartDrow Software» ՍՊԸ-ի հետ կնքված գործարքներ) հետ,  
հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և  
առաջարկություններ չունենք:

/ Հարգանքով

Ատոմ Զանջուղազյան

034/19274-11  
23.06.2011թ.





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆՔԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 9/14.8

0015, Երևան, Մ.Խորենացու 3,  
Հեռ. 50 20 20, 59 46 05

Ձ: ՄԿՄ/3-4/4442-11  
27.06.2011 թ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի  
համակարգման հանձնաժողովի նախագահ  
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 21.06.2011թ. թիվ 15/15.6/10331-11 գրությանը կից ներկայացված  
«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի  
համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի ՈՒ-954-Ա  
որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Սիմոնյան»  
կրթական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ.

Որոշման նախագծի 1-ին կետի 3-րդ ենթակետում «SmartDrowSoftware» ՍՊԸ-  
ի հետ կնքված գործարքի արժեքը նշված է 3.672.000 դրամ, այն դեպքում, երբ կից  
ներկայացված փոխանցման հաշվի համաձայն այն կազմում է 723 ԱՄՆ դոլար:  
Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում եմ ճշտել նշված արժեքային  
անհամապատասխանությունը:

Ա. ԱղաՎերդյան

044/19652-11  
27.06.2011 թ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության  
բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի ՈՒ-954-Ա որոշմամբ հաստատված  
ծրագրին հարակից գործարքների մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ)» որոշման նախագծի կապակցությամբ  
առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը	Հիմնավորում
<p>Որոշման նախագծի 1-ին կետի 3-րդ ենթակետում «SmartDrow Software» ՍՊԸ-ի հետ կնքված գործարքի արժեքը նշված է 3.672.000 դրամ, այն դեպքում, երբ կից ներկայացված փոխանցման հաշվի համաձայն այն կազմում է 723 ԱՄՆ դոլար: Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում եմ ճշտել նշված արժեքային անհամապատասխանությունը:</p>	<p>ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի դիտողությունների ու առաջարկությունների վերաբերյալ</p> <p>Հաշվի է առնվել նախագծին լրանշակվել է:</p>

9/14.8

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՆԱԽԱԳԻԾ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
2011 թվականի N Մ -  
քաղ. երևան

- Ա

9/14.9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N Մ-442-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ  
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հունիսի -ի N 3/3.8-1/-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հունիսի -ի N ԱԱ/3-4/-11 եզրակացությունները, որոշում է:

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 00032803) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի «Հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեկեցիկ պայմաններ» ծրագրի մասին» N Մ-442-Ա (2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-280-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Բ. Առաքելյան» ԱԶ-ի հետ (ՀՎՀՀ՝ 40509141) 2011 թվականի հունիսի 8-ին կնքված N ՃՄԲ-001/011 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սննդամթերքի մատակարարման աշխատանքների իրականացում՝ 1311000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

9/14.9

0010, Երևան, Մելիք-Աղայան փող. 1  
Հեռ. (+374 10) 59 52 26

N<sup>o</sup> \_\_\_\_\_

Ձեր N<sup>o</sup> \_\_\_\_\_

Հայաստանի Հանրապետության  
կառավարության բարեգործական ծրագրերի  
համակարգման հանձնաժողովի նախագահ՝  
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 14.06.11թ. N 15/15.2/9915-11 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008թ. հունիսի 20-ի N Մ-442-Ա («Ամերիկայի հայ ավետարանչական ընկերության Հայաստանի մասնաճյուղ») որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություն կատարելու և հարակից գործարքի («Բ. Առաքելյան» ԱԶ-ի հետ կնքված պայմանագիր) հետ, հայտնում եմք, որ որոշման նախագծին կցված պայմանագիրը ներկայացված է թերի:

Հարգանքով

Ատոմ Զանջուրազյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ 9/14.9

0015, Երևան, Մ.Խորենացու 3,

Հեռ. 50 20 20, 59 46 05

«Հ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ա. Տեր-Սիմոնյանին»

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 14.06.2011թ. թիվ 15/15.2/9915-11 գրությամբ կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի NU-442-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Անողակի հարկերի բաժին, հեռ. 594652

ՍՃՃԻ Մատակարարման  
Պայմանագիր N ԵԱԲ-001/011

9/14.9

Երևան

«08» Հունիսի, 2011թվական

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ (Պետական Ռեզիստրի վկայական 01Բ 002122 տրված 03.03.2008թ, իրավաբանական հասցե՝ Երևան, Նիկոլ Դուման 22), այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս լիազորված անձ Հարութ Ներսեսյանի (ՀՀ-ում կացության հատուկ կարգավիճակ ունեցող /474 անձնագիր AH0611920, տրված 27.07.2010թվ-ին 002-ից, քնակվող Հրաչյա Քոչար 14 քնակարան 47), որը գործում է երկու հազար ինը թվականի ղեկավարների երկուսին Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Ռեմե Ալեք Մկրտիչի Լեոնյանի կողմից 10 ղեկավարների 2010 թվականին տրված լիազորագրի հիման վրա, մի կողմից, և «Բ. Առաքելյան» Ա.Ձ, այսուհետ՝ «Մատակարար» ի դեմս անհատ ձեռնբերեց Բագրատ Առաքելյանի-ի, որը գործում է վկայականի հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Մատակարարը պարտավորվում է Գնորդին՝ որպես սեփականություն հանձնել, իսկ Գնորդը՝ ընդունել N Ա/01 հավելվածում, որը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը, նշված սննդամթերքը, որը նախատեսված է մատակարարել Գնորդի կողմից Հավելված Ա/01 –ում նշված ժամանակահատվածում և քանակով:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

- 2.1. Մատակարարը իրավունք ունի՝
  - 2.1.1. պահանջել վճարելու սննդամթերքի համար օրենքով նախատեսված կարգով եթե Գնորդը ժամանակին չի վճարել սույն պայմանագրին համապատասխան հանձնված սննդամթերքի համար:
- 2.2. Մատակարարը պարտավոր է՝
  - 2.2.1. Սույն պայմանագրի համապատասխան հավելվածը ստորագրելու օրվանից նշված ժամանակահատվածի ընթացքում Գնորդին ակտով հանձնել Գնորդի կողմից սահմանված վայրում՝ Սահմանված վայր է հանդիսանում Փյունիկ գյուղի, Հանքավանի "Շողիկ" ճամբարը:
  - 2.2.2. Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ սննդամթերք
  - 2.2.3. Գնորդին հանձնել սույն պայմանագրով որոշված տեսականու սննդամթերք:
  - 2.2.4. Գնորդին հանձնել սույն պայմանագրին համապատասխան որակի սննդամթերք:
  - 2.2.5. Գնորդին հանձնել այնպիսի սննդամթերք, որը հնարավոր լինի մինչև պիտանիության ժամկետի ավարտն օգտագործել ըստ նշանակության:
  - 2.2.6. Սննդամթերքը իր իսկ տրանսպորտային միջոցներով տեղափոխել Հանքավանի «Շողիկ» ճամբար:
  - 2.2.7. Մատակարարը պատասխանատվություն չի կրում սույն պայմանագրում նշված, իր կողմից մատակարարված ապրանքների որակի և քանակի համար, եթե պարզվում է, որ այդ ապրանքները Գնորդի կողմից օգտագործվել են սխալ կամ ոչ նպատակային, կամ դրանց անվորակ կամ պակաս լինելու մասին Գնորդը տեղյակ է պահել վաճառողին սույն պայմանագրի 2.4.1 կետում նշված ժամկետից ուշ, կամ ապահովել է այդ ապրանքների համար ոչ բարենպաստ, խոնավ կամ չիսկվող պահեստավորման պայմաններ:
  - 2.2.1.0 Վճարել տոկոսներ, մատակարարումն ուշացված ամեն օրվա համար օրական 0.01 % չափով պայմանագրի ընդհանուր արժեքից, բայց ոչ ավել քան սույն պայմանագրի ընդհանուր արժեքի 2%:
- 2.3. Գնորդն իրավունք ունի՝
  - 2.3.1. Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց, եթե մատակարարը անհիմն կերպով հրաժարվում է հանձնել վաճառված սննդամթերքը:
  - 2.3.2. Եթե մատակարարը Գնորդին հանձնել է սույն պայմանագրով որոշվածից պակաս քանակի սննդամթերք, պահանջել լրացնելու սննդամթերքի պակաս հանձնված քանակը կամ հրաժարվել հանձնված սննդամթերքից, իսկ եթե սննդամթերքի համար վճարել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը:
  - 2.3.3. Եթե սույն պայմանագրին համապատասխան սննդամթերքի տեսականու հետ հանձնվել է տեսականու մասին պայմանի խախտմամբ սննդամթերք, պահանջել տեսականու վերաբերող պայմանին սննդամթերքի փոխարինում սույն պայմանագրով նախատեսված տեսականուն համապատասխանող սննդամթերք 1 /մեկ/ օրյա ժամկետում:
  - 2.3.4. Փոփոխելու նշված սննդամթերքի/ հացի քանակը, ընդհանուր գումարը՝ նախորդ պայմանավորվածություն ձեռք բերելով Մատակարարի հետ: Փոփոխությունը կատարվում է հավելյալ գրավոր համաձայնագրով և կցվում է պայմանագրին:
  - 2.4. Գնորդը պարտավոր է՝

- 2.4.3. Վճարել սննդամթերքի արժեքը՝ սույն պայմանագրի 3.1 և 3.1.1 կետերում նշված կարգով, ժամկետներում և գումարով:
- 2.4.4. Սննդամթերքը Վաճառողից ընդունել ակտով:

9/14.9

**3. զինը և վճարման կարգը**

- 3.1 Սույն պայմանագրի ընդհանուր արժեքն է 1311000 / մեկ միլիոն երեք հարյուր տասնմեկ հազար / ՀՀ դրամ, առանց ԱԱՀ-ի:  
Մատակարարված ապրանքի զինը ներառում է Մատակարարի կողմից իր պարտականությունները կատարելու հետ կապված բոլոր ծախսերն:
- 3.1.1. Պայմանագրով մատակարարվող ապրանքի դիմաց վճարումը կատարվում է հետևյալ կարգով՝
- Առաջին վճարումը կատարվում է պայմանագիրը ստորագրելուց հետո 10/տաս/ աշխատանքային օրվա ընթացքում - պայմանագրի ընդհանուր արժեքի 40 քառասուն տոկոսի չափով:
  - Երկրորդ վճարումը կատարվում է մինչև 2011թվ. Հունիսի 20 –ը - պայմանագրի ընդհանուր արժեքի 30 երեսուն տոկոսի չափով:
  - Երրորդ վճարումը կատարվում է մինչև 2011թվ. Օգոստոսի 17-ը - պայմանագրի ընդհանուր արժեքի 30 երեսուն տոկոսի չափով:
- 3.2. Վճարումները կատարվում են անկանխիկ ձևով՝ վճարման ենթակա գումարը Մատակարարի սույն պայմանագրում նշված բանկային հաշվին փոխանցելու միջոցով:

**4. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /Նորս-Մածոր/**

Սույն պայմանագրով պարտականություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրիեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

**5. Վեճերի լուծման կարգը**

- 5.1 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:
- 5.2 Սույն պայմանագրով չմախտեսված դեպքերում կողմերն իրենց պարտականությունները չկատարելու համար պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**6. Այլ պայմաններ**

- 6.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից և դադարում է երկու կողմերի սույն պայմանագրով իրենց վերապահված իրավունքների և պարտականությունների պատշաճ կատարմամբ:
- 6.2 Սույն պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են գրավոր և ստորագրվում են կողմերի կողմից:
- 6.3 Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

**Մատակարար**  
 "Բ. Առաքելյան" Ա Ս  
 ք. Զրազդան, Շահումյան - 4  
 հ/հ 2476400092933325  
 Արդշինի մվեստբանկ, ք. Զրազդան  
 ՀՎՀՀ՝ 40509141

..... / Բ. Առաքելյան

Կ.Տ.

**Գնորդ**

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցություն  
 Նիկոլ Դուման 22, Երևան  
 հ/հ 247012210024/0999  
 Արդշինի մվեստբանկ, ք. Երևան  
 ՀՎՀՀ՝ 00032803

..... / Գ. Արսենյան/

Կ.Տ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի N Մ-442-Ա որոշմամբ որոշման հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

Դիտողության կամ առաջարկության բավանդակությունը	Հիմնավորում
...	...
Դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ	Դիտողություն հաշվի է առնված, պայմանագիրը կցվում է:
... կից պայմանագիրը թերի է:	

9/14.9